Թունաքիմիկատով աշխատանքը սկսելուց առաջ այն պետք է բացել ջրով, ընդ որում խստորեն հետեւելով հրահանգներին, եւ որ գլխավորն է՝ հատուկ առանձնացված եւ ոչ մի դեպքում սննդի համար նախատեսված ամանում: Աշխատանքի ընթացքում չի կարելի ծխել, ուտել կամ խմել: Կարեւոր է հետեւել, որ թունաքիմիկատը ընկնի ոչ թե ձեր հարեւանների կամ մոտակա մարգերի վրա, այլ ըստ նշանակության: Պոլիէթիլենով նախապես պետք է ծածկել այն մարգերը, որոնք մշակման կարիք չունեն: Պեստիցիդով կարելի է աշխատել մեկ ժամից ոչ ավել:

Աշխատանքի ավարտից հետո պետք է լոգանք ընդունել, բերանը ողողել, փոխել հագուստը, խնամքով լվանալ հանդերձանքը եւ գործիքները, որոնք շփման մեջ են եղել պեստիցիդի հետ: Գործիքների լվացման համար կամ ջրին ավելացնում են քացախ, կամ օգտագործում են օճառաաղային լուծույթ: Կեղտոտ ջուրը հարկավոր է թափել հատուկ փորած փոսի մեջ, ջրհորից կամ ջրամատակարարման այլ աղբյուրից հեռու:

Պեստիցիդների մետաղական եւ պլաստիկ տարաները կենցաղային կարիքների համար ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ չի կարելի օգտագործել:

Վերջում պարզապես մնում է համբերել մինչեւ նշված «սպասման ժամկետի» ավարտը, այսինքն մշակման պահից մինչեւ բերքահավաքն ընկած ժամանակահատվածը:

Սույն հրատարակությունն իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից, «ԿՕԱ-ների և թունավոր քիմիկատների բացասական ազդեցության մասին իրազեկության բարձրացում Հայաստանի ծրագրային գյուղերում՝ ռիսկերի նվազեցման համար» ծրագրի շրջանակներում, Հայաստանում ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի և Հոլանդիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ՝ ELA ծրագրի շրջանակներում, «Եվրոպայի կանայք հանուն ընդհանուր ապագայի» միջազգային կազմակերպության միջոցով:

«Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի»
Հասարակական կազմակերպություն

375019, ՀՀ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ, սենյակ 609
Հեռ: (+374-1)-52 36 04
E-mail: office@awhhe.am
URL: www.awhhe.am

2

Թունաքիմիկատների անվտանգ օգտագործումը

www.awhhe.am
ԵՐԵՎԱՆ 2004

Թունաքիմիկատները քիմիական պատրաստուկներ են՝ օժտված տոքսիկ (կենսասպան) հատկությամբ: Ուստի.

- Թունաքիմիկատներն անհրաժեշտ է օգտագործել մեծ զգուշությամբ եւ խելամտորեն:
- Կարելի է օգտագործել միայն պետական գրանցում ստացած պեստիցիդները՝ խստորեն հետեւելով օգտագործման հրահանգներին:

Գյուղացին պետք է իրազեկ լինի պեստիցիդների ճիշտ օգտագործման, պահպանման եւ օգտահանության /ուտիլիզացիայի/ վերաբերյալ:

Գոյություն ունի օգտագործման համար թույլատրելի պեստիցիդների ցանկ, որը մշտապես՝ յուրաքանչյուր տարի, թարմացվում եւ վերահաստատվում է: Թունաքիմիկատներ գնելիս նպատակահարմար է ձեռքի տակ ունենալ այդ ցանկը:

Պեստիցիդները չի կարելի գնել կասկածելի վայրերից, պատահական մարդկանցից, այլ հատուկ թույլտվություն ունեցող խանութից եւ ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ բոլոր պատրաստուկները լինեն փաթեթավորված եւ կշռաբաշխված փոքր բաժիններով (**0,1 հա մշակելու համար անհրաժեշտ քանակից ոչ ավել**): Յուրաքանչյուր փաթեթի վրա պետք է լինի պիտակը, օգտագործման հրահանգները:

Փաթեթը պետք է լինի ամբողջական, նշված լինի օգտագործման ժամկետը եւ լինի ուժի մեջ: Չի կարելի մշտապես օգտագործել միեւնույն պատրաստուկները:

Անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել հրահանգները եւ խստորեն հետեւել դրանց կատարմանը: Հողամասը պեստիցիդներով կարելի է մշակել միայն առավոտյան մինչեւ 10:00 եւ երեկոյան 18:00-ից հետո, ոչ քամոտ եղանակին: Ջերմոցներում պեստիցիդներով մշակումը պետք է կատարվի բոլոր մնացած աշխատանքների ավարտից հետո: Մշակելուց հետո ջերմոցը կողպեքով փակվում է եւ կախվում է նախազգուշական ցուցանակ: Չի կարելի մտնել մշակած դաշտ կամ ջերմոց մինչեւ տվյալ թունաքիմիկատի համար նախատեսված ժամկետի ավարտը:

Նախօրոք պետք է պատրաստել անհրաժեշտ բոլոր սարքերը, պարագաները: Պեստիցիդների լուծույթներով աշխատելիս անթույլատրելի է ձեռքի սրսկիչների, հիդրոպուլտերի, ավելների, խոզանակների օգտագործումը: Անհրաժեշտ է օգտվել կռնակապայուսակային սրսկիչներից, որի ձողի երկարությունը 1,2 մ է, որպեսզի լուծույթի կաթիլները չընկնեն մաշկի վրա, աչքերի եւ շնչառական օրգանների մեջ:

Քիմիկատների հետ աշխատելու համար հարկավոր է հատուկ արտահագուստ: Առավել հարմար են բամբակե խալաթը, անդրավարտիքը կամ կոմբինեզոնը, կաշվե կամ ռետինե կոշիկները, գլխարկը կամ կեպկան, ռետինե ձեռնոցները, եւ, եթե հրահանգներում նշված է, ակնոցները եւ շնչադիմակները /ռեսպիրատորները/ : Պեստիցիդներով աշխատելուց հետո հանդերձանքը պետք է լվանալ տնտեսական օճառով: Այն, ինչ հնարավոր չէ լվանալ, պետք է օճառի լուծույթով մաքրել, այնուհետեւ մաքուր ջրով պարզաջրել: Այս ամենից հետո հանդերձանքը հարկավոր է պահել մնացած հագուստներից առանձին: